

# ԳԵՂԱՄՆ

## աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 27 փետրվարի 2025թ. թիվ 4 (632)

### ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԲԱՅՎԵՑ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐՄԱՆ ԿԱՔԻՆԵՏ

Սեւանի բժշկական կենտրոնում բացվել է համակարգչային շերտագրության կաբինետ:

Ինչպես տեղեկացրեց Սեւանի բժշկական կենտրոնի տնօրեն Արամ Նիկողոսյանը, համակարգչային շերտագրության ծառայության ստեղծումը կարելու է արագացնի ժամանակակից եւ հասանելի ախտորոշման ապահովման ուղղությամբ:

Համակարգչային շերտագրման սարքը ձեռք է բերվել ՀՀ կառավարության միջոցներով:

Համակարգչային շերտագրման կաբինետի բացման արարողությանը մասնակցել են ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, փոխնախարարներ Լևոն Հակոբյանը եւ Արմեն Գասպարյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, ոլորտի պատասխանատուներ, բժշկական անձնակազմի ներկայացուցիչներ եւ հյուրեր:

Բացման խոսքով հանդես է եկել Սեւանի բժշկական կենտրոնի տնօրեն Արամ Նիկողոսյանը ընդգծելով, որ համակարգչային շերտագրման կաբինետի գործարկումը զգալիորեն



կբարձրացնի բժշկական ծառայությունների որակը, կկրճատի ախտորոշման ժամկետները եւ կխթանի ժամանակակից բժշկության զարգացումը մարզում:

-Նման ներդրումները նպաստում են առողջապահական համակարգի ապակենտրոնացմանը եւ բարձրորակ բուժօժանդակությունների հասանելիության ապահովմանը տեղում: Նոր ՀՇ կաբինետը հազեցած է ժամանակակից սարքավորումներով, համապատասխանում է միջազգային չափորոշիչներին եւ հնարավորություն է ստեղծում իրականացնել ճշգրիտ ու արագ հետազոտություններ՝ տարբեր հիվանդությունների վաղ հայտնաբերման եւ արդյունավետ բուժման համար,- ներկայացրել է Արամ Նիկողոսյանը:

Միջոցառման ավարտին նախարարը եւ մարզպետը շրջայց են կատարել նորաբաց կաբինետում, այլ բաժանմունքներում, գրուցել բուժանձնակազմի ու բուժառուների հետ, հետաքրքրվել առողջության ապահովագրության ներդրման հետ կապված հարցերով, ապա այցելել Սեւանի բժշկական կենտրոնից կից ու նորաբաց «Հանրապետական շտապօգնության ծառայության Գեղարքունիքի մարզային կենտրոն», որը վերջերս նորոգվել է հազեցել է 1 ռեանումբիլով:

Գեղամա աշխարհ

### Ի ԵՆ ԱՆ Հ Ա Տ Ա Կ Ի Ե Ն Ա Ն Ա Վ Ա Ն Բ



Մանկությանն ու պատանեկությանն հիմնական մասն անցկացրել են ծննդավայրիս Գեղիովիտ գյուղի վարչական տարածքի սահմանով անցնող Ագրիճի կամ Իշխանագետ կոչվող գետի խորը կիրճում: Մեր թաղի տղաներով հիմնականում այստեղ էին պահում մեր գառներն ու հորթերը: Այս գետում սովորեցինք լողալ, այս վայրում սովորեցինք գոյատևել բնության գրկում, պարսատիկով քար նետել, ճանաչեցինք ուտելի բանջարը, ինացանք՝ ինչպես ծուկ որսալ, քայլարշավով անցնել գետափով վեր ու վար եւ այլ կարելու իրողություններ: Գետի ափերին են գտնվում Մաղինա, Լեռնակերտ, Գեղիովիտ, Վերին

Գետաշեն, Ներքին Գետաշեն՝ նախկին Կոթաքաղաք բնակավայրերը, ավելի վերին հատվածում նշված եւ այլ գյուղերի՝ նախկինում անասնապահական ֆերմաներն էին, այժմ ամառանոցներ: Եվ բոլոր բնակավայրերն հայտնի են իրենց հազարամյա պատմությամբ, հուշարձաններով կիկլոպյան ու միջնադարյան ամրոցներ, եկեղեցիներ, մատուռներ, դամբարաններ, հռչակավոր Կոթավանքը, այլ հուշարձաններ:

Գեղարքունիքի մարզի հայտնի վանական համալիրներից Կոթավանքը գտնվում է Մարտունու տարածաշրջանի Ներքին Գետաշեն գյուղում: Այն կառուցվել է 9-րդ դարում, այն ժամանակվա Սյունի նախարարական տոհմի Հայկազուն ճյուղի իշխանանիստում՝ Կոթ քաղաքում: Վանքի Մուրթ Աստվածածին եկեղեցին եւ խորհրդային տարիներին, քանի դեռ ավերակ վիճակում էր, եւ՝ այժմ արդեն հիմնանորոգված, ճանաչված ուխտատեղի է: Սյունիքի տեր Վասակ Սյունեցու եւ Աշոտ Ա Բագրատունի թագավորի դուստր Մարիամի որդի Գրիգոր Սուփան իշխանը Կոթավանքը վեր է խոյացրել որպես դպրատուն, հավատի տուն, իսկ թշնամիների հարձակման դեպքում՝ բերդ-ամրոց:

/շարունակությունը էջ 5-ում/

### ՆՈՐԱՏՈՒՄԻ ՀԵՐԻ ԳԱՐ ԱՄՐՈՑԸ ԵՎ ԸՈՐԳՈՒԻ ԿԱՄ ՊՈԳՈՍ-ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Նորատուս գյուղն աշխարհում թեւեւ հանրահայտված է իր պատմական գերեզմանոցի ավելի քան 800 գեղաքանդակ խաչքարտապանաքարերով, սակայն հազարամյակներ հեռվից մինչ մեր օրերը հասած բնակավայրում քիչ չեն նաեւ պատմության մի շարք արժեքավոր հուշարձաններ, որոնք քիչ են հայտնի կամ բավարար չափով չեն ուսումնասիրված եւ հայ ու արտերկրի հանրությանը ներկայացնելու կարիք ունեն:

Նորատուսի Հերի դար ամրոցը եւ Շորգոլի կամ Պողոս-Պետրոս վանքը նպատակահարմար գտանք՝ ներկայացնելու մեկ հրապարակման շրջանակի մեջ, հաշվի առնելով պատմական այդ երկու կարեւորագույն հուշարձանների՝ իրար շատ մոտ գտնվելու հանգամանքը:

Նորատուսի Հերի դար ամրոցի մասին մեր իրականության մեջ առաջին անգամ մանրամասն նկարագրություն տվել է անվանի հնագետ Գեղեոն Միքայելյանը՝ իր կողմից կատարված ուսումնասիրությունը ներկայաց-



նելով «Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցները» գրքի համապատասխան բաժնում:

«Հերի դարի ամրոցը գտնվում է Նորատուս գյուղից երկու կիլոմետր արեւելք: Սեւանա լճի ափամերձ հարթության վրա առկա է կոնաձեւ լանջերով, մեծ թեքության մի բարձունք: Նրա լանջերը ծածկված են հրաբխային խարամով, որը եւ խիստ դժվարացնում է բարձունքի զագաթելը: Այն շրջապատի հարթությունից բարձր է 120 մետր: Տեղացիներն այդ բարձունքը Հերի դար են կոչում, որովհետեւ նրա հարավարեւելյան լանջում կան երկու բավական ընդարձակ քարայրներ, որոնք, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, հավանորեն եղել են նախնադարյան մարդու կացարաններ: Լեռան զագաթը ծագարածեւ է, եւ բարձունքի բոլորակ եզրերով անցնում են կիկլոպյան ամրոցի պարիսպների մնացորդները՝ կրկնելով տեղի շրջանաձեւությունը:

/շարունակությունը էջ 3-ում/

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԱԿ-Ի ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՆ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը ընդունել է ՄԱԿ-ի փորձագետներ Բրայան Էլիսոնին և Ալեն Մկրտչյանին՝ նրանց հետ քննարկելով Գեղարքունիքի մարզում առաջիկա տարիներին ՄԱԿ-ի գաղափարային ծրագրերի ռազմավարության մշակման ուղղությամբ համագործակցություն ծավալելու հետ կապված հարցեր:

Հանդիպման սկզբում հյուրերը նշել են, որ ՄԱԿ-ի գրասենյակի կողմից առաջիկա 3-5 տարիների համար մշակվում է կարողությունների զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագիր, որը պետք է ունենա ավելի համակարգված ու քիրախավորված բովանդակություն և կարիք-



ների համարժեք գնահատում, որտեղ անհրաժեշտ կլինի Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հետ համագործակցությունը:

Կարեն Սարգսյանը ներկայացրել է ՄԱԿ-ի կողմից վերջին տարիների ընթացքում Գեղարքունիքի մարզում իրականացված բազմաբնույթ ծրագրերը և դրանց արդյունքները, շեշտելով,

Գեղամա աշխարհ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ Է ԿԱՏԱՐԵԼ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը աշխատանքային այց է կատարել Գեղարքունիքի երկրագիտական թանգարան աշխատանքային պայմաններին, առաջնահերթ ու հրատապ խնդիրներին, դրանաշնորհային ծրագրով վերջերս իրականացված աշխատանքների արդյունքներին ծանոթանալու նպատակով:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, մարզպետը շրջել է ցուցասրահներով ու շարժվող դարձնելով մարզի պատմությունն ու ինքնությունը ներկայացնող ցուցադրությունների պահպանությանն ու ներկայացման ընթացքին:

Թանգարանի տնօրեն Մարիաննա Մուսոյանի տեղեկացմամբ «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ը մասնակցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Աջակցություն մշակութային ժառանգության պահպանմանն ու հանրահռչակմանը» դրանաշնորհային մրցույթին, որի շրջանակում «Հնագիտությունն ու շինչը» ծրագիրը արժանացել է հավանության: Պետական ֆինանսական աջակցության (2 մլն 290 հազար դրամ) շնորհիվ վերանորոգվել է 230 քմ մակերեսով հնագիտական ցուցասրահը, ձեռք են բերվել ժամանակակից ապակեպատ ցուցափեղկեր և տեղադրվել արդիական լուսավորության համակարգ: Բացի այդ, մարզպետի աշխատակազմի աջակցությամբ թանգարանին տրամադրված լրացուցիչ դրանաշնորհով ձեռք են բերվել ևս երեք ցուցափեղկ: Վերանորոգված սրահում ներկայացված են Գեղարքունիքի տարածաշրջանի հնագույն դամբարաններից հայտնաբերված բացառիկ գտածոներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. III հազարամյակից մինչև Կանի թագավորության ժամանակաշրջանի արժեքավոր տեղեկություններ տալով Սեւանի ավազանի հազարամյակների պատմությանն ու մշակույթի մասին:

Այցի ընթացքում Կարեն Սարգսյանը զրուցել է թանգարանի աշխատակիցների հետ, քննարկել ընթացիկ աշխատանքները, զարգացման ծրագրերը և թանգարանային կյանքի ակտիվացման հնարավորությունները:

Գեղամա աշխարհ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԱՅՅԵԼԵԼ Է ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը այցելել է Գեղարքունիքի մարզային գրադարան աշխատակազմին փոխանցելով գրքերի փոքրիկ կապոց՝ իր համեստ ներդրումն ունենալով գրադարանային ֆոնդի համալրման գործում:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, այցի ընթացքում մարզպետը շփվել է գրադարանի աշխատակիցների և ընթերցասեր երիտասարդների հետ, հետաքրքրվել նրանց նախասիրություններով, ընթերցած գրքերի ցանկով: Այնուհետ գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը մարզպետին է ներկայացրել այս տարվա ընթացքում իրականացված միջոցառումների ցանկը, ապագա միջոցառումների բովանդակությունն ու ժամանակացույցը, ինչպես նաև՝ աշխատանքային պայմանների բարելավման հետ կապված առաջնահերթ խնդիրները, որոնք հիմնականում առնչվում են շենքային տարածքի ավելացմանը:

Կարեն Սարգսյանը, կարելուրելով մարզային գրադարանի դերը գրական-մշակութային արժեքների պաշտպանությանն ու զարգացման գործում, նշեց, որ համատեղ ու համագործակցված քայլերով Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը իր հնարավորության սահմաններում կփորձի հասնել գրադարանում առկա խնդիրների կարգավորմանը:



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԱՆՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԿՆՆՈՒՄ ԱՊՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՌԳՈՒՄ ԱՐԴԵՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵՆ 96 ՀԱՋԱՐ 622 ԲԱՆԱԿԱՐԳ

ՀՀ Գեղարքունիքի մարզում կցագրված 209 275 քաղաքացիներից 96 622-ը, կամ 47 տոկոսը, արդեն իսկ ընդգրկված են առողջության համընդհանուր ապահովագրության համակարգում:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանը, համակարգում հաշվառված քաղաքացիներից 27 հազար 152-ը 65 և ավել բարձր տարիքի անձինք են: Մնացած հաշվառվածները մինչև 18 տարեկաններ են, հաշմանդության կարգ ունեցողները, սոցիալապես անապահով խմբերը, 200 հազար դրամից ավել աշխատավարձ ստա-

ցողները: Ավելին, արդեն հայտնի է նաև ապահովագրության համակարգից օգտվող շահառուների քանակը 2026 թվականի փետրվարի 23-ի դրությամբ ապահովագրության համակարգում հաշվառված 96622 քաղաքացիներից 1391 անձ արդեն ստացել է հիվանդանոցային բուժօգնություն, իսկ 8657 անձի տրվել է դեղորայք:

Ներկայացված թվերն անընդհատ փոփոխվում են, քանի որ գործ ունենք բնակչության մշտական շարժի, կարիքների, համակարգի ներդրման մեկնարկի ու ընթացքի հետ: Այնպես որ, ներկայացված թվերը փոփոխվում են արագ ու աճման կարգով, ներկայացրեց Լուսինե Վարդանյանը:

2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՐԱՆՈՍՈՒՄ 31 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՅԵԼ

2018-2025 թվականների ընթացքում Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղում սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 31 ծրագիր է իրականացվել, որի արդյունքում պետական ու համայնքային բյուջեներից ներդրվել է 3 միլիարդ 716 միլիոն 574 հազար դրամ:

Ինչպես տեղեկացրեց Երանոսի վարչական ղեկավար Սաշա Բավեյանը, իրականացված աշխատանքի արդյունքում կապիտալ նորոգման է ենթարկվել մանկապարտեզի շենքը, հիմնանորոգվել 6 կիլոմետր 400 մետր երկարության 31 հազար 899 քառակուսի մետր մակերես զբաղեցնող ներհամայնքային ճանապարհ, կառուցվել 12 կիլոմետր 230 մետր խմելու, 9 կիլոմետր ոռոգման ջրատարների ներքին ու արտաքին ցանցեր, 5,5 կիլոմետր արտաքին լուսավորության ցանց, 317 մետր գազատար, 1 մինի ֆուտբոլի խաղադաշտ, Մարտունի համայնքի պատմության և բնության հուշարձանների գովազդային պատկերներով ավտոսպասարկման 2 կանգառ:

Երանոսի մանկապարտեզի կապիտալ նորոգմանն ու նոր գույքի ձեռքբերման արժեքը կազմել է 224 միլիոն դրամ: Արդի չափորոշիչներին համապատասխանող մանկապարտեզը վերաբացվել է գործում է 2025 թվականի մայիսից, որտեղ բացված 4 խմբերում հաճախում են 101 նախադպրոցական տարիքի երեխա:


2025 թվականի գարնանից ՀՀ պետությունից մի-



ջոցներով, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում մեկնարկել է Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցի նորոգմանը շենքի շինարարությունը, որի պայմանագրային արժեքը կազմում է 2 միլիարդ 700 միլիոն դրամ: 2026 թվականի փետրվարի կեսի դրությամբ արդեն ավարտին են մոտենում նկուղային հարկի կառուցման աշխատանքները: Հիմարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2027 թվականին:

«Գեղամա աշխարհ»

# ՆՈՐԱՏՈՒՄԻ ՀԵՐԻ ԳԱՐ ԱՄՐՈՅԸ ԵՎ ՇՈՐՁՈՒԻ ԿԱՍ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔԸ



Նսկիզբը էջ 1-ում/

Պարսպի ընդհանուր երկարությունը շուրջ 500 մետր է, իսկ ամրոցի բռնած մակերեսը շուրջ չորս հեկտար: Պարսպներից ներս երեւում են կացարանների ավերակները, որոնց մեջ իր լավ պահպանությամբ աչքի է ընկնում մի քառանկյունի շենք, որի պատերը մնում են երկու-երեք շարք քարի բարձրությամբ: Պատերի լայնությունը 2,5 մետր է, իսկ շինության չորս անկյուններում դրված են խոշոր քարեր: Այս շենքն ունի երկու բաժանմունք՝ երկու սենյակի ձևով:

Ամրոցի պարիսպների կառուցման տեխնիկան նման է մյուս ամրոցների պարիսպների կառուցման տեխնիկային: Ամրոցն ունեցել է 7 աշտարակ, որոնց հետքերը երեւում են պարիսպների վրա: Աշտարակներից երկուսը գտնվում են ամրոցի մուտքի աջ ու ձախ կողմերում, երկուսը՝ ամրոցի հյուսիսարևելյան պարսպամասում, իսկ երեքը՝ հավասար հեռավորությամբ վրա, մեկը մյուսից 40-45 մետր հեռավորությամբ, ուղղված հարավ-արևմուտք: Աշտարակներն ունեն 6, երկուսը՝ ամրոցի հյուսիսարևելյան պարսպամասում, իսկ երեքը՝ հավասար հեռավորության վրա, մեկը մյուսից 40-45 մետր հեռավորությամբ, ուղղված հարավ-արևմուտք: Աշտարակներն ունեն 6\*6 մետր հարթակներ:

Ամրոցի մուտքը եղել է հյուսիսարևելյան կողմից, այդ մասի լանջը համեմատաբար ավելի քիչ թեքություն ունի: Մուտքից ճանապարհը դուրս է գալիս եւ իջնում դեպի ներքեւի հարթության վրա եղած բնակատեղին, այնուհետ աստիճանաբար թեքվում դեպի հյուսիս: Բնակավայրից արևելք փռված է դամբարանադաշտը:

Հերի դարի ամրոցը, հավանորեն, Վելիբուխի երկրի պաշտպանության գործում հատուկ տեղ է գրավել: Կանգնած լինելով բարձր սարի վրա՝ այս ամրոցը մեծ տեսադաշտ է ունեցել: Այնտեղից պարզ երեւում են Գավառագետի հովտի ու նրա շրջապատի համարյա բոլոր կիկլոպյան ամրոցները եւ Սեւանա լճի ողջ հայելին, գրում է Գեղեճն Միքայելյանը:

Պարզապես սքանչելի են Հերի դարից բացվող բնապատկերները բոլոր կողմերից: Հարավային կողմում, ինչպես ավիդ մեջ, ուրվագծվում են Գեղամա եւ Վարդենիսի լեռնաշխարհները իրենց բարձրաբերձ կատարներով, տասնյակ կլիմետրերի ընդհանուր ձգվածությամբ: Արևելյան կողմում հստակ երեւում են Արեւելյան Սեւանի, հյուսիսային կողմում՝ Սեւանի ու Արեգունու, արեւմուտքում՝



Փամբակի լեռները, Արդանիշի ու Սեւանի թերակղզիները, Սեւանա լճի ափամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերը, Սեւանը գոտեւորող արհեստական անտառները: Իսկ ամենամոտիկ բնության հուշարձանը, որը բացառիկ է իր նմանն այլևս չունենալով Պեղարքունիքի մարզում, դա «Կայա» կոչվող կրաավազային ժայռաշքան է, որ Հերի դարի բարձունքի դիմացից դեպի հարավ է ձգվում շուրջ 3-4 կիլոմետր երկարությամբ:

Բառերով անհնար է նկարագրել այն տպավորությունները, որոնք մարդը ստանում է այդ ժայռաշքան դիտելիս: Բնության ամենագոր ձեռքն այնպիսի պատկեր է քանդակել ժայռերին, որ մարդկային աչքը դրանք կարող է նմանեցնել հազար ու մի պատկերների՝ մարդկանց, կենդանիների, բույսերի, կառույցների, այլ երեւույթների տեսքով: Մի ժայռախումբ իր կերտվածքով նույնիսկ Սֆինքսի արձանի տպավորություն է թողնում: Ժայռախմբերի ուղղահայաց բարձրություններում տեղ-տեղ նկատվում են տարատեսակ թռչունների՝ արծիվների, բազենների, չղջիկների, ծիծեռնակների, սարյակների բներ: Որոշ տեղերում էլ նկատելի են ավելի մեծ չափերի փորվածքներ, որոնք կարող էին եւ ժամանակին տեղի բնակիչների համար ծառայել որպես թաքստոց-կացարաններ: Ու եթե պատմության հուշարձանները, մի քանի հազարամյակի կամ դարի պատմություն ունեն, ապա բնության այս հուշարձանն առաջացել է միլիոնավոր տարիներ առաջ:

Ժայռաշքայի արեւելյան կողմում տարածվում է սոճու եւ փշարմավի հսկայական անտառը, որը կանաչ է մնում տարվա բոլոր եղանակներին, իսկ ամռան ամիսներին ծաղկում ու փոշոտվում է սքանչելի բույր տարածելով շրջակայքով մեկ:

Բնության այս անկրկնելի հուշարձանի հյուսիսարևմտյան բարձունքին, ուղիղ Հերի դար ամրոցի հարավային կողմի դիմաց էլ կանգուն է մնում պատմության եւս մեկ կարեւոր ու բացառիկ հուշարձան ՇորՁուի կամ Պողոս-Պետրոսի վանքը՝ վերականգնված մատուռով ու մի քանի տասնյակ գեղաքանդակ տապանաքարերով ու խաչքարերով:

ՇորՁուի վանքի ուսումնասիրության արդյունքներն արտացոլված են հայ անվանի հնագետ, վիճաբարգետ Սեդրակ Բարխուդարյանի «Դիվան հայ վիճաբարության» աշխատության մեջ:

«Մատուռը գտնվում է գյուղից հյուսիս-արևելք, մոտ երկու կիլոմետր հեռու, մի բարձրության վրա: Շինված է եղել սրբատաշ քարերով, բայց հետագա նորոգումների ժամանակ հին մասից մնացել են պատերի ստորին մասերը միայն: Արեւմտյան կողմում բազմաթիվ խաչքարեր իրար միացնելով պատի տեսք են տվել եւ փոքրիկ բակ գոյացրել: Շուրջը կան խցերի ավերակներ: Թվական ունեցող ամենահին արձանագրությունը վերաբերում է 1613 թվականին, բայց շենքի հնագույն մասը 13-րդ դարից ավելի նոր չի կարող լինել», - գրում է Սեդրակ Բարխուդարյանը:

Անվանի վիճաբարգետն այս հնավայրում վերծանել է 7 խաչքարի եւ 3 տապանաքարի վրա պահպանված վիճաբարերը: Մնացած խաչքար-տապանաքարերը, որոնց թիվ հասնում է մի քանի տասնյակի, անարձանագիր են, սակայն իրենց պատրաստման ոճով համընկնում են 7-17-րդ դարերի քանդակներին:

Մի բան պարզ է, որ այս վանքն ու նրա շրջակայքի պատմական գերեզմանոցը ձեւավորվել է Նորատուսից մի առանձին բնակավայրի շուրջ, որի անունն առայժմ անհայտ է մնում ժամանակին բնակիչների կողմից անակնկալ լքվելու պատճառով:

Իսկ ի՞նչ են պատմում պահպանված ու վերծանված վիճաբարերը: Եվ այսպես, մատուռի հարավային պատի արեւմտյան անկյունում հին երեսպատման քարի վրա կա թերի

արձանագրություն. «Իմ թիվս... ես... ծառա եթել ի գեղիս ի եկեղեցիս 3... նոց ինոյ ոք... Տեր Քրիստոս»: Ըստ Բարխուդարյանի արձանագրությունը վերաբերում է 13-րդ դարին:

Բակում կանգնած խաչքարի քիվին արձանագրված է երկու տող. «Ի թվ. 207 /1505/ կանգնեցի խաչս ի փրկություն հոգոյ Դավթին, որդի Մըսրին»:

Մատուռի արեւմտյան մուտքի կողքին, գետնի մեջ խրված խաչքարին արձանագրված է. «Ի թվ. 208 /1506/ ես, Շատիբեկս, կանգնեցավ խաչս հոգվոյ ինոյ»:

Բակի մեջ գտնվող փոքր, օրորոցածեւ տապանաքարի հարավային երեսին կա մեկ տող արձանագրություն. «Այս է հանգիստ Ավաքին. թվ. 225/1536/»:

Նախորդին կից մեկ այլ տապանաքարի հարավային կողմում կա 3 տող արձանագրություն. «Այս է հանգիստ Փանոսին»: Տապանաքարը նախորդի ժամանակակիցն է, Փանոսը՝ նույն գեղղաստանի անդամը:

Բակի հյուսիսարեւմտյան անկյունում գտնվող խաչքարի քիվին արձանագրված է. «Ես, անարժան Աթանես երեցս, կանկնեցի խաչս փրկություն հոգվոյ ինոյ. թվ. 118 /1560/»:

Բակի արեւելյան մասում գտնվող փոքր, օրորոցածեւ տապանաքարի վրա անարվեստ գրչության բարձրագույն արձանագրված է. «Սուրբ խաչս բարեխոս...-ի փրկության. թվ. 144/1613/»:

Բակի հյուսիսարեւմտյան մասում պահպանված խաչքարի քիվին ու շրջանակներում արձանագրված է. «Սուրբ խաչս բարեխոս մեղավոր Մկրտչին՝ հայրն Ստեփանոսին, Սահակին»: Բարխուդարյանի կարծիքով այն 16-րդ դարի կերտվածք է:

Բակի արեւմտյան մասում պահպանված խաչքարի քիվին պահպանված է 1 տողանի արձանագրություն. «Սուրբ խաչս բարեխոս Տեր Մաթսին»:

Նախորդին կից մեկ այլ խաչքարի քիվին կա մեկ տող արձանագրություն. «Սուրբ խաչս բարեխոս Մարիանին»:

Նրան հարավից կից մեկ այլ խաչքարն էլ բովանդակում է հետեւյալը. «Սուրբ խաչս բարեխոս Աթի-



ան»:

Տարածքում սահքի պատճառով առաջացած փոսերից կարելի է ենթադրել, որ հողի շերտի տակ հնարավոր է թաղված լինեն այլ խաչքարեր ու տապանաքարեր, շինությունների հետքեր, ինչպես որ մի շարք այլ հնավայրերի դեպքում է:

Պատմական այս գերեզմանոցում հուղարկավորվել են ինչպես հոգեւորականներ, այնպես էլ աշխարհիկ մարդիկ՝ ունեւորներ կամ արհեստավորներ: Այստեղ պահպանված տապանաքարերից ամենահետաքրքիրը վարսավիրի տապանաքարն է, որի վրա պատկերված անձի ձեռքին ցայտուն կերպով երեւում է վարսավիրի մկրատը:

ՇորՁուի կամ Պողոս-Պետրոսի վանքը Նորատուսի, ինչպես նաեւ Գավառ համայնքի այլ բնակավայրերի համար շատ վաղ ժամանակներից համարվում է ուխտատեղի ու սրբավայր, ուր մարդիկ այցելում են թե՛ ազգային եկեղեցական տոների, թե՛ սովորական այլ օրերի ընթացքում: Պատմական այս վայրում այցելուներին ներշնչում ու ոգեւորում են ազգային ու ազգապահպան արժեքները, որոնք մեզ ավանդել են մեր քարագործ վարպետներն ու գրագետ կազմողները՝ հայկականության դեմքը փրկելով ու պահ տալով հետագա դարերին ու սերունդներին: Եվ սա մի անկրկնելի, հրաշալիքներ կրող վայր է Նորատուս գյուղի հյուսիսարեւելյան կողմում, Սեւանա լճի ափին, որտեղ այնքան ներդաշնակորեն իրար են միաձուլված պատմության ու բնության գեղեցկագույն հուշարձանները:

Խոստով Խլղաթյան

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԱՐԻՍՏՈՒԿՐԱՏ ՈՒ ԷԼԵԳԱՆՏ ԱՐՎԵՍՏ ԿՈՑՈ ՆՎԱԳԱՐԱՆ

Կոտոն հանդիսանում է ճապոնիայի ավանդական ամենամախրնորելի երաժշտական գործիքը...

Ինչպես հայտնի է, կոնֆուցիական պատկերացմամբ տարբերակում են ճշմարտացի եւ ոչ ճշմարտացի երաժշտությունները...

Կոտոն ազնվական նվագարան է, այն համարում են էլեգանտ ու նրբագեղ, որը կապված է կառուցվածքի հետ:

Ճապոնական լեզվում երկու հիերոգլիֆներ կարողացվում են որպես կոտո եւ ունեն հարաբերակցություն տարբեր չինական կամիթային նվագարանների հետ...

Ճամանակակից կոտոն 13 մետաքսե լարանի եւ տեղաշարժվող կամրջակ-հենակներով նվագարան է, այժմ մետաքսե լարերին փոխարինում են նեյլոնի լարերը...

Կոտոն նվագում են աջ ձեռքի երեք մատներով՝ բթամատ, ցուցամատ ու միջմատ, փղոսկրե մեղիատորների օգնությամբ...

Կոտոյի նախատիպերն են՝ չինական գյուղերը, ջեմնե սե, կորեական աժանգ, կայագին եւ կյոնուգոյ նվագարանները:

16-րդ դարից ձայն ձեռքի կիրառումը ավանդական նվագելաճուռում փոփոխություն է, որի հիմքում, նվագողը, հավելվելով յուրաքանչյուր լարի, կարող է փոխել ձայնային տոնը...

Կախված երաժշտության ժանրից օգտագործվում են տարբեր պենտատոնիկ լարվածքներ: Կոտոն ունի վիշապի գլուխ, վիշապի լեզու, վիշապի աչքեր, վիշապի եղջյուր:

Ավանդական արվեստը՝ այդ թվում նաեւ երաժշտությունը, մուտք է գործել ճապոնիա Չինաստանից բուդո-



դիզմի հետ, Նարա դարաշրջանում, մեր թվարկության 710-794 թվականներին:

Պատմական իրադարձությունները հնագույն ժամանակահատվածի վերաբերյալ սակավաթիվ են: Պատմիչների եւ գրականագետների մատենագրություններում մատնանշվում է, որ եղել են հարյուրամյակներ առաջ գրված մենակատարային ստեղծագործություններ:

Կոտո նվագարանը հայտնվել է ճապոնիայի արքունիքում 7-րդ դարում, Գակուսո անվանմամբ եւ դարձել ամենակարելոր երաժշտական գործիքը:

Յիայի դարաշրջանը (794-1185 թվականներ) համարվում է ճապոնական մշակույթի ծաղկման էտապ, որտեղ նշմարվում է բուդոյիստական գեղանկարչության, քանդակագործության հատուկ ոճ, որը առանձնահատուկ է միայն ճապոնական բուդոյայական տաճարներին:

Ճամանակաշրջանում ի հայտ է գալիս կոտո նվագելու մենակատարային արվեստի ավանդույթը: Առաջին պատկերներին կարող ենք հանդիպել բուդոյայական տաճարներում, ինչպես նաեւ աշխարհիկ գեղանկարչության մեջ: Առաջին հերթին սա կապված է գործիքի երկնային գեղի հետ: Բուդոյայական մշակույթում այն հանդես է գալիս իբրեւ սրբապատկեր՝ տաճարների պատերին պատկերված կոտոն բուդոյայական էակների ձեռքին: Աշխարհիկ արիստոկրատների շրջանում կոտո նվագելու մշակույթը ասոցացվում է վեհության եւ մարդկային հոգեւոր որակների բարձրագույն արժեքի հետ:

Յենց այս դարաշրջանում է այն հանդիսացել որպես արիստոկրատական կրթություն: Այս ամենը վառ արտահայտված է տվյալ ժամանակաշրջանի գեղարվեստական գրականության մեջ:

Բուդոյայական դրախտը նկարգրված է հնագույն գրականության բավականին շատ ստեղծագործություններում, որոնցից կարող ենք առանձնացնել Ուցուխո- Մոնոգատորի գործը, որտեղ ներկայացված է կոտո նվագելը իբրեւ յուրահատուկ արարողակարգ: Երաժշտության կախարդանքը ներդաշնակվել է սուրբ խոսքերին եւ բնության խորհրդավոր ձայներին:

Այս ժամանակաշրջանում երաժշտությունը հրամցվում է իբրեւ լրջագույն հոգեբանական գործիք: Ցավոք սրտի, այդ ժամանակահատվածի երաժշտական ստեղծագործությունները չեն նոտագրվել: Կոտո նվագելու նկարագրությունը հստակ կարող ենք տեսնել 10-րդ դարի գրող Մուրասակիի «Սեյվայագն Գեծգի» վիպակում, ուր բավականին հիշատակվում են կան այն մասին, որ առանց կոտո նվագարանի չկա ոչ մի արքունական երաժշտության վեհություն: Վեպի հերոսները համեմատում են կոտոյի ձայնը քամու ձայնի հետ: Ավելի շատ երաժշտության խորը նրբերանգները կապված են բնության

ձայների հետ: Այն ձայնը որը արտաբերում է գործիքը, առանձնանում է իր մաքրությամբ, զուլալությամբ՝ ինչպես ժայռից բխող ջրի շառաչը: Երաժշտությունը պատկերավոր է դառնում արտացոլելով Ձեն այգու հանգստությունը, ծաղկած բալենու անցողիկ գեղեցկությունը, աշնանային երեկոների մելամաղձությունը:

Մուրոմաժի դարաշրջանում (1336-1573) այն ստացել է հայտնություն Սամուրայների շրջանում եւ ասոցացվել է թեյախմության արարողակարգերով՝ ստեղծելով յուրահատուկ մշակույթ:

Պատերազմական ժամանակաշրջանի թոհուրեօր չէր կարող անկասկան անցնել մշակույթի կողքով: Էդո (1603-1868) դարաշրջանում կոտոյի տարածումը ընդլայնվել է դուրս գալով արիստոկրատների շրջանից ու հանդիսանալով կամուրջ ավանդականի ու արդի արվեստի միջեւ:

1614 թվականից կոտո նվագարանով մեծամասամբ զբաղվում էին կանայք:

Որպես պրոֆեսիոնալ ու վիրտուոզ երաժիշտ հայտնի է Յացուխասի Կյեյնգոն: Նա եղել է նոր տեխնիկայի կիրառողը՝ բավականին հայտնի իր մշակումներով, բարեփոխումներով: Կենգյո Յացուխասին կույր էր: Այստեղից է եկել կույր երաժիշտների կրթումը կոտո նվագարանի վրա: Այս գործում, ովքեր ցուցաբերում էին հատուկ տաղանդ, հասնելով բարձրագույն վարպետության աստիճանի, նրանց շնորհվում էր «Կենգյո» տիտղոսը՝ ի պատիվ այս ոճի հիմնադրի:

Յացուխասիի դպրոցն ուներ երկու ճյուղ: Առաջինը Իկուտա-Ռյու Կիոտո ժամանակաշրջանին, երկրորդը Յամադա-Ռյու Էդո ժամանակաշրջանին հարող ճյուղերն են: Մինչ օրս երկու դպրոցները մրցակցության մեջ են: Առաջին ճյուղը պատկանում է ազատ ոճով նվագելու ուղղությանը, ուր ներգրավվում են բավականին օտարազգի աշակերտներ, մինչդեռ երկրորդ դպրոցն իրենից ներկայացնում է բավականին փակ ու խիստ պահպանողական ուղղություն:

Էլիտար համարվող այս գործիքը հասու չէ հասարակ մահկանացուներին: Խառնուրդի արվեստում առաջին անգամ կոտոն հանդես եկավ լիիրավ գործողությունների մասնիկ: Երաժշտությունը համեմատական է թռչչի հետ՝ նույն հաթուրայան վրա դրվելով վիշապի կամ հագարան բլբուլի հետ:

19-րդ դարում նետաքրքրությունը ավանդական մշակույթում երաժշտական ու նկարչական ճյուղերում լճացում ապրեց: Սկսվում է արեւմտյան մշակույթի թափանցումը, զարգացումը եւ դրա վերամշակումը ճապոնական լադային համակարգում, որպես նորարարություն:

20-րդ դարում ձեւավորվում է ճապոնական կոմպոզիտորական նոր դպրոց, համապատասխանելով եվրոպական չափանիշներին, սակայն չխախտելով ավանդական ֆոլկլորային կուլուրիտը: Բնականաբար, այս ամենն իր կարելուր ազդեցությունն

ունեցավ՝ ամմասն չթողնելով կոտո նվագարանային արվեստի զարգացմանը:

Միյագի Միչիոն հանդիսանում է նոր ճապոնական երաժշտության հիմնադիրը, որն իր ոճով զարմանալի կերպով միաձուլում էր եվրոպական եւ ավանդական երաժշտական աշխարհները: Երբեք չվախենալով նորարարություններից եւ լինելով արեւելյան երաժշտության սիրահար նա գրել է ստեղծագործություն կոտոյի ու երգեհոնի համար, կոտոյի ու ջութակի համար: Ստեղծել է 17 լարանի բաս կոտոն: Նրա հսկայական տաղանդի ու ներդրած ավանդի շնորհիվ վերածնունդ ապրեց կոտոյի արվեստը: Կոտոյի մոդեռն, արդի եւ միջազգային ճանաչման գործում մեծ է եղել մեծ կոտոյահար Սավայի կնոջ դերը: Նոր գործիքավորումները բաս կոտոյի համար դարձան նորակազմիկ դարաշրջանի երաժշտություն:

20-րդ դարում ասպարեզ են գալիս կոտոյի լուսանկարները: Պետք է նշել, որ այսօր ճապոնիայում, ինչպես նախկինում, պահպանողական մարտավարություն կա՝ օտարերկրացիներին չթույլատրել նվագել կոտո: Բայց, ի շնորհիվ Իկուտա-Ռյուի դպրոցի, ողջ աշխարհում արդեն իր տարածումն ու կիրառումն ունի այս նվագարանը. այն վաղուց հատել է սրբազան մշակույթի սահմանները:

Գործիքի դիմանկան թույլ է տալիս կատարել ոչ միայն ավանդական, այլ նաեւ բարդ տեխնիկական միջնաէտ հոգեթով, մեղմ ու շշուկեղ արտահայտող երաժշտություն: Մաքուր ու կատարյալ հնչյունների խաղը դյուրիչ մթնոլորտ է ապահովում:

Կոտոն մեր օրերում արդեն ունի միջազգային լայն ճանաչում, ընդգրկված է տարբեր երկրների անսամբլներում, եւ կարող ենք օրախոսությամբ նշել, որ շայաստանում էլ մարդիկ կարող են ճապոնական ավանդական արվեստի ունկնդիր դառնալ:

Չայաստանում կոտո նվագարանը կիրառվում է 2024 թվականից, առաջին նվագողը հանդիսանում է քանոնոհարուհի Մարիաննա Գեւորգյանը:

Կոտո նվագարանը ձեռք է բերվել Երեւանի պետական դրամատիկական թատրոնի կողմից: Այս ֆենոմենալ մտքի հեղինակն է ՀՀ վաստակավոր գործիչ Գրիգոր Խաչատրյանը, ով արվեստում իր յուրահատուկ ձեռագրով ու մարդկային բարձր կերպարով բազմաթիվ բացառիկ գաղափարներ է կյանքի կոչել: Ինքնատիպ ռեժիսորական մտածողության արդյունք է ճապոնական խորը արվեստի ներառումը Շեքսպիրի Չամբետում՝ Գրիգոր Խաչատրյանի կողմից: Բեմադրող ռեժիսորը Գոնգադայի սպանությունը փոխարինել է ճապոնացի հայտնի գրող Յուկիո Միչիմայի «Չայրենասիրություն» վեպով: Յենց այստեղ հանդիսատեսը կարող է մանրամասն ընկղմվել ու մասնիկը դառնալ ճապոնական թատրական ու երաժշտական արվեստի:

Ճապոնական ավանդական երաժշտարվեստի ամենասիրված ու հայտնի ստեղծագործություններն են հնչում կոտոյով՝ ռոկուդան, սակուրան եւ այլն: Ռոկուդան համարվում է կոտոյի համար դասական երաժշտության գլուխգործոց: Կոտոյի նուրբ լարերի արձակած հիպնոտիկ երաժշտությունը, խառնվելով դերասանական պրոֆեսիոնալ խաղին, հանդիսատեսին տեղափոխում է ճապոնիայի հնագույն դարաշրջանի դաստիարակելով իմաստություն, ազնվություն, բարոյականություն, մարդասիրություն, հավատ, վստահություն, արարողակարգ, արիստոկրատություն, էլեգանտություն, խաղաղություն, ռազմական մարտավարություն, արիություն, հայրենասիրություն: Ի դեպ Կոնֆուցիոսի այս գիտական միտքը կապված է կոտոյի լարերի անվանումների հետ:

Մարիաննա Գեւորգյան

# Ի ԳԵՒԱՆ ԱՐԱՏԱԿ-Ի ԳԵՒԱՆ ԱՎԱՆՔ



Նսկիզը՝ էջ 1-ում/

Վանքի հարեանությունը ու տարածքում պահպանվել են միջնադարյան հարյուրավոր խաչքարեր ու տապանաքարեր: Վանքի հատկապես հարավային կողմում մինչև Ագրիճի կիրճի աջափնյա հարթափերը, հեռվից էլ տեսանելի են միջնադարյան այդ կոթողները, որոնց մեծ մասն արվեստի սքանչելի գործեր են:

Իհարկե, դարերի ընթացքում նույն կոթողների մի մասը մնացել է հողի տակ, ինչպես միշտ՝ եղել են նաև զանազան գործեր, որ տապալել են խաչքարերը: Միջնադարյան գերեզմանատունը շատ էր տուժել նաև խորհրդային տարիներին՝ մեկուկես-այն պատճառով: Այնուամենայնիվ, պահպանվածները լուռ, բայց հավաստի վկայություններով պատմում են մեր պապերի ստեղծագործ աշխատանքի, հավատքի պաշտամունքի, ազգային արժեքների կերտման մասին:

Տարածքում շատ են նաև ավերակ բնակարանների հիմքեր ու հետքեր: Չորի այս հատվածում՝ Ներիքն ու Վերին Գետաշեն գյուղերի մեջտեղում՝ գետի ձախակողմյան հենց ափին (40, 07, 31, 5 N, 45, 15, 38, 24 E կոորդինատներում) ծովի մակերևույթից 1976 մետր բարձրության վրա է գտնվում միջնադարյան մեկ այլ ուխտավայր՝ Իշխանհատակ փոքրիկ մատուռը: Այս մատուռի ել

նշված Իշխանագյուղի խաչքարերի, տապանաքարերի մասին «Գարուն» ամսագրի 1987 թվականի 8-րդ համարում «Ոսկեծեռիկ վարպետները ել մենք... անարժան հետնորդներս» վերնագրով հոդված էի գրել (էջ 18-19): Հաճախ էի այցելում, այժմ էլ, որ առիթ ու ժամանակ են ունենում, անպայման լինում են Կոթավանքում ու նրան հարող տարածքներում:

2026 թ. փետրվարի 1-ին եղբորս որդու՝ Վահագնի, իր երեխաների Արտյոմի ու Մերիի եւ Անահիտ դստերս հետ դարձյալ Իշխանհատակում էի: Մինչ ձորն իջնելը՝ անցանք դարավոր խաչքարերի մոտով: Այս խաչքարերն իմ մեջ տպավորվել են վաղուց՝ երբ մի անգամ, դեռևս պատանի, միայնակ Վերին Գետաշենից մեր գյուղ էի գնում: Տեսա խաչքարերը, հատկապես բարձրերը, որոնց վրա արձիվներ էին նստած, որոշները ճախրում էին երկնքում, որոնք տպավորվեցին ու միշտ են ձգում:

Սեդրակ Բարխուդարյանը «Դիվան հայ վիճագրության» աշխատության 4-րդ հատորում գրում է. «Այս վայրը տեղացիներն անվանում են Իշխանագյուղ, հարավային եզրին գտնվող հասարակ մատուռը Իշխանավանք, իսկ նրա մեծ տապանաքարը՝ Իշխանի գերեզման»: Նույն մատուռի մասին հիշատակում է նաև «Դ. գյուղամիջում եւ շրջակայքում ցրված հուշարձաններ» ենթագլխում (էջ 264-265): «Իշխանագյուղի հարավային

եզրին քարափի տակ Իշխանավանք կոչված մի հասարակ եկեղեցի կա, որի մեջ գերեզմանաքարի վրա պարուն Արղուֆի անթվական արձանագրությունն է (թիվ 1201)»:

3,9\*4,7 մ արտաքին չափերով կառույցը ժամանակին ծածկված էր փայտով, 1989 թ. բարերարների կողմից բարեկարգվել է մատուռը, տանիքը բետոնապատվել: Հայկական եկեղեցուն հատուկ խորան չունի, սակայն խորանի տեղում 1,5\*1,5 մ չափերով խաչքար կա: Ինչպես ընդունված է մեր շատ ուխտավայրերում, հատկապես՝ Թուխմանուկներում, այստեղ եւս կա սովորույթ, որ փոքր քարը տղացուն են խաչքարի մոմապատ երեսին: Եթե կապվ, ուխտն ընդունելի է, նպատակը կիրականանա: Այստեղ այդ նպատակին է ծառայում

խորանի տեղի մեծ խաչքարը: Հիշում եմ տարվա որոշ օրերին այս սրբավայր ուխտի էին գնում մայրս, մեր հարեւանուհիները, հաճախ մեզ երեխաներին էլ էին տանում հետևելու: Մատուռի ներսում է 2,1 մ երկարությամբ, 75 սմ լայնությամբ տապանաքարը՝ մեջտեղից կիսված, ներքին մասում արձանագիր: Ս. Բարխուդարյանը գրում է. «Երեսին քանդակված է մեջտեղից՝ երկար գգեստով եւ գնդապրոզ գոտիով. աջ ձեռքին դաշույն շեղբը դեպի վեր. ձախով բռնել է գոտու մեջ խրած դաշույնի կոթը. ոտների տակին 4 տող. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ Է ՊԱՐՈՆ ԱՐՂՈՒԹԻՆԱ» (էջ 284) արձանագրությունը: Հավանաբար նահատակ իշխանի տապանաքարն է, որի առիվ էլ ուխտավայրը կոչվում է Իշխանահատակ-Իշխան-նահատակ: Մատուռի տարածքում կան 10-ից ավելի խաչքարեր: Հսկա ժայռերին խաչքար են քանդակված: Գետափին մի շատ մեծ ժայռաբեկոր նստած է պատվանդանների վրա, տակով հնարավոր է անցնել: Ժայռերից որոշները, հնարավոր է, որպես սրբազան կոթող օգտագործվել են դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում: Մի մեծ ժայռաբեկորի վրա 10-ից ավելի, մոտ 15 սմ տրամագծով ու խորությամբ, կլորավուն փոսորակներ կան, որոնք մարդու ձեռքի աշխատանք են հիշեցնում: Մեկ այլ

ժայռաբեկորի վրա էլ անցք կա: Բնական է, թե արհեստական, պարզ չէ, պետք է ուսումնասիրվի: Ժամանակին այստեղ նաև գետնափոր պահեստներ են եղել: Ուղղաձիգ բարձրացող ժայռերի վրա նույնպես փոսորակներ կան: Նման տեսք ունի նաև Ջերմուկի Կեչուտի ջրամբարի մոտակա ուխտատեղին՝ տեղացիների կոչած Փիլքյազը, որտեղ նույնպես մոմապատ ժայռ կա՝ նպատակի քար կայցնելու համար: Նման տեսարան կա նաև Քաշաթաղի շրջանի միջնադարյան ամրոցներից, հավանաբար, Խոժոռաբերդն իր վրա պահող հսկայածավալ ժայռաբլուրի հարավային կողմում:

Մատուռից մոտ 50-60 մետր դեպի արեւելք՝ գետի անմիջապես ափին, պահպանվել է միջնադարյան բազիլիկ եկեղեցու ավերակ: Մոտավոր չափերն են 10\*67 մետր: Եկեղեցու բոլոր պատերը հիմքից վեր 1-ից մինչև 2 մետր բարձրությամբ պահպանվել են: Մուտքը եղել է արեւմուտքից: Բեմը մոտ 2 մետր երկարությամբ, մեջտեղը մեծ խաչքանդակով խաչքար է: Սուրբ խորանից մոտ 2 մետր հեռավորությամբ մեկ այլ խաչքար կա: Եկեղեցուց դեպի արեւմուտք մի տապանաքար կա՝ երեսի աջ կողմում արձանագիր: Ձախ կողմում կուծ, մարդ ձեռքին հավերժության նշանով ինչ-որ առարկա, կացին, մական թռչուն եւ այլ պատկերներ են քանդակված: Հետեւի կողմում 3 խաչքար են: Ըստ լուսանկարի վիճագրագետ, պատմական գիտությունների դոկտոր Արսեն Հարությունյանը վերծանել է արձանագրությունը. «ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՒԱԽԱՄ ՄԿՐՏՉԻՆ, ՔԻՐԱՍ ԿԱԶՍՈՂ ԹՎ. ՌԽԲ. 1593»: 6-17-րդ դարերում հայտնի Քիրան Կազմող վարպետի կերտածներից մեկն է: Մյուս քանդակագործող հայ վարպետների համեմատությամբ Քիրան Կազմողը եղել է ամենարժանավորը. նրա ստորագրությամբ եւ անստորագիր հաշվվում է 64 գործ 54 խաչքար (32-ը՝ Նորատուսում), 10 տապանաքար:

Իշխանավանքի տարածքը վերջին տարիներին բարեկարգվել է, մոտը տաղավար է կառուցվել ուխտավորների համար: Հնարավոր է՝ այստեղ միջնադարում վանական համալիր է եղել եկեղեցի, մատուռ, պահեստային տարածքներ, խաչքարեր: Կարծում եմ տարածքը կարելի է լուրջ ուսումնասիրել:

**Ջոհրաբ Ըռքոյան**

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ 3 ՄԵԴԱԼ ԵՆ ՆՎԱՃԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ



հորիզոնականը (մարզիչներ Հովհաննիսյան, Անդրանիկ Քամալյան):

Իսկ ճամբարակի բռնցքամարտի դպրոցի սաներ Արաքսյա Շառաջյանը եւ Գոռ Ղազարյանը ՀՀ երիտասարդների ու մեծահասակների բռնցքամարտի առաջնությանը զբաղեցրել են 3-րդ

Գեղարքունիքի մարզի բռնցքամարտիկները մեկ արծաթե ու երկու բրոնզե մեդալներ են նվաճել Հայաստանի մեծահասակ երիտասարդ տարիքի բռնցքամարտիկների առաջնությունում:

Ինչպես տեղեկացրեց ՀՀ Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Գեորգ Սարգսյանը, Սեւանի մարզադպրոցի սան Նազելի Ավագյանը ՀՀ երիտասարդների բռնցքամարտի առաջնությանը զբաղեցրել է 2-րդ պատվավոր

պատվավոր հորիզոնականը (մարզիչ Էդգար Սահակյան):

Արդյունքները վատ չեն, սակայն պետք է հաշվի առնել, որ Գեղարքունիքի մարզի բռնցքամարտիկներն իրենց խոսքը դեռ կասեն այս տարվա մայիսին կայանալիք բռնցքամարտի կրտսեր ու ավագ տարիքի հանրապետական առաջնությանը, որտեղ մրցակալային տեղեր նվաճելու մեր ակնկալիքները չափազանց շատ են,- ներկայացրեց Գեորգ Սարգսյանը:

## ՎԱՐԴԱՉՈՐՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 15 ԾՐԱԳԻՐ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր գյուղում 2018-2025 թվականներին իրականացվել է սոցիալ-տնտեսական նշանակության 15 ծրագիր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 885 միլիոն 738 հազար դրամ: Ծրագրերից 14-ն իրականացվել են ՀՀ սուբվենցիոն, մեկը պետական ծրագրերի շրջանակներում:

Սուբվենցիոն ծրագրերի իրակա-

նացման արդյունքում հիմնաորոգվել է 4290 գծամետր ճանապարհ, մասնակի նորոգվել մշակույթի կենտրոնը, կառուցվել 11870 մետր խմելու, 15800 մետր ոռոգման ջրատար ցանցեր, 50 խորանարդ մետր տարողության խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբար, 4800 մետրարտաքին լուսավորության ցանց:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկա-



պարտեզ» ծրագրի շրջանակներում վերանորոգվում է Վարդաձորի միջնակարգ դպրոցի շենքը 202 միլիոն դրամ արժեքով: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոսից եւ կավարտվեն 2026 թվականի մարտին:





59 տարեկան հասակում երկրային կյանքին հրաժեշտ տվեց ճամբարակի առողջության կենտրոնի տնօրեն, վաստակաշատ բժիշկ, բուլոբի կողմից սիրված ու հարգված քաղաքացի Արմենակ Ռադիկի Մելքունյանը:

Նա ծնվել էր 1966 թվականին, ՀԽՍՀ Կրասնոսելսկի շրջանի Ներքին ճամբարակ գյուղում: 1973-1983 թվականներին սովորել է ավարտել է ճամբարակի Բորյան եղբայրների անվան միջնակարգ դպրոցը: 1983-84 թվականներին աշխատել է շինարարական կազմակերպությունում: 1984-1986 թվականներին ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում:

1986 թվականին ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտ, որն ավարտել է 1993 թվականին: 1993-1994 թվականներին Ա. Միքայելյանի անվան ինստիտուտում անցել է ինտերնատուրա՝ «Ընդհանուր վիրաբուժություն» մասնագիտությամբ:

1994 թվականին աշխատանքի է անցել «ճամբարակի հիվանդանոց» ՊՓԲԸ-ում՝ որպես վիրաբույժ: 1997-2000 թվականներին ծառայության է անցել Հայոց բանակում՝ որպես բուժ-ծառայության պետ: 2000-2006 թվականներին աշխատել է Հայոց բանակում՝ որպես բժիշկ վիրաբույժ եւ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԸ ԿՈՐՑՐԵՑ ԻՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԺՇԿԻՆ ՈՒ ԿՎԻՐՅԱԼ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ



բուժկետի պետ: 2000-2004 թվականներին աշխատել է «ճամբարակի հիվանդանոց» ՊՓԲԸ տնօրեն: 2004-2006 թվականներին շարունակել է ծառայությունը Հայոց բանակում՝ որպես վիրաբույժ:

2006 թվականին կրկին նշանակվել է «ճամբարակի հիվանդանոց» ՊՓԲԸ տնօրենի պաշտոնում: 2009 թվականի հունվարի 1-ից մինչ իր երկրա-

յին կյանքի ավարտը՝ 2026 թվականի փետրվարը, դեկավարել է «ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ-ն:

Արմենակ Մելքունյանը ոչ միայն աչքի էր ընկնում մասնագիտական բարձր որակներով, այլ նաև անսահման մարդասիրությամբ, ազնվությամբ ու բարությանը, կարիքի մեջ հայտնված մարդկանց անշահախնդրորեն օգնելու պատրաստակամությամբ: Նա բազմաթիվ մարդկային կյանքեր է փրկել թե՛ զինվորական, թե՛ հանրային ծառայություններ իրականացնելու ընթացքում՝ արժանանալով փրկվածների ու նրանց հարազատների ստորաբաց օրհնություններին ու երախտագիտությանը: Եվ այդքանը նա անում էր անգամ անքուն ճիշերների, գրկանքների, անսահման միջուկի հաշվին երբեք ոչնչից չտրտնջալով:

Նա ողջ բեռնվածությամբ, շատ հաճախ էլ շուրջօրյա, աշխատավայրը չէր լքում թե՛ համավարակի, թե՛ Արցախյան 44-օրյա պատերազմի օրերին՝ օրինակ ծառայելով նաև մյուս բուժաշխատողների համար: Չափազանց պարտաճանաչ էր, չափազանց

հոգատար, նաև պահանջկոտ՝ յուրաքանչյուր մարդու բուժման ողջ գործընթացն իրականացնելիս:

Արմենակը ոչ միայն լավ վիրաբույժ էր, այլ նաև բուժաստատության աշխատանքների լավագույն կազմակերպիչ ու հմուտ ղեկավար, ուն ջանքերի շնորհիվ ճամբարակի առողջության կենտրոնը գրանցեց զգալի հաջողություններ ու ձեռքբերումներ:

Նրան ճանաչում ու գնահատում էին ոչ միայն ճամբարակում, այլ նաև նրա սահմաններից դուրս ու նաև ղեկավար կառույցում՝ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում:

Ու նրա մահով ոչ միայն կորուստ կրեց ճամբարակ համայնքի, այլ նաև Գեղարքունիքի մարզի առողջապահական համակարգը:

Արմենակ Մելքունյանը երկրային կյանքում թողեց սիրված կին, երկու դուստր, բազմաթիվ հարազատներ, բարեկամներ, ընկերներ ու գործընկերներ, ովքեր արդեն իրենց սրտերում վառ կպահեն նրա անուրանալի վաստակն ու արդեն հավերժացած անունը:

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ ՀՀ ճամբարակի համայնքապետարան «ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ «Գեղամա աշխարհ» թերթ**

ՎԵՐԱՆՈՐԳՎԵԼ Է ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ԳՅՈՒՂԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՆՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՆՆԻՃԸ



զար դրամ: Շինարարական աշխատանքների արդյունքում վերանորոգվել են մարզադահլիճի հատակը, սանհանգույցները, հանդերձարանները, միջանցքը, դռներն ու պատուհանները, իրականացվել են ներքին հարդարման աշխատանքներ: Օրագրի երկրորդ փուլով նախատեսվում է ջեռուցման

Պետբյուջեի միջոցների հաշվին ավարտվել են Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գանձակ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքները, որոնց մեկնարկը տրվել էր 2025 թվականի հուլիս ամսից:

Ինչպես տեղեկացրեց Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Անուշ Բարսեղյանը, վերանորոգման աշխատանքների պայմանագրային արժեքը կազմել է 18 միլիոն 700 հա-

համակարգի անցկացում ու մարզագույքի ձեռքբերում:

Օրագրի իրականացման շնորհիվ Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոցի աշակերտներն արդեն ֆիզկուլտուրայի դասերն անցկացնում են միանգամայն բարվոք ու ժամանակակից պայմաններում:

**Գեղամա աշխարհ**

ՎԵՐԱՆՈՐԳՎԵԼ Է ԼՃԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՆՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՆՆԻՃԸ

Պետբյուջեի միջոցների հաշվին ավարտվել են Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լճափ գյուղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքները, որոնց մեկնարկը տրվել էր 2025 թվականի հունիս ամսից:

Ինչպես տեղեկացրեց Լճափի միջնակարգ դպրոցի տնօրեն Անահիտ Մովսիսյանը, վերանորոգման աշխատանքների պայմանագրային արժեքը կազմել է 17 միլիոն 219 հազար դրամ: Շինարարական աշխատանքների արդյունքում վերանորոգվել են մարզադահլիճի հատակը, սանհանգույցները, հանդերձարանները, միջանցքը, դռներն ու պատուհանները, իրականացվել են ներքին հարդարման աշխատանքներ: Օրագրի երկրորդ փուլով նախատեսվում է ջեռուցման համակարգի անց-



կացում ու մարզագույքի ձեռքբերում:

Օրագրի իրականացման շնորհիվ Լճափի միջնակարգ դպրոցի աշակերտներն արդեն ֆիզկուլտուրայի դասերն անցկացնում են միանգամայն բարվոք ու ժամանակակից պայմաններում:

**Գեղամա աշխարհ**

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՍԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳԱԼԱՏԻ ԴԱՆՆԻՎԻՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Արդեն մի քանի օր է, ինչ սկսվել է ընթանում են Սեւան քաղաքի Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի դահլիճի բեմի վերանորոգման աշխատանքները:

Այս նախաձեռնությունն իրողություն է դարձել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում, Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության պատվիրակմամբ եւ Հայաստանում Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության համաֆինանսավորմամբ:

«GIZ-ը համագործակցում է Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության Հանրային ոլորտի նորարարության



օբյեկտի մասնակցի հետ՝ Հայաստանում քաղաքացիակենտրոն ծառայությունները իրենց հա-

յությունների նախագծումը խթանելու նպատակով: Դեռեւս 2024 թվականից Սեւան համայնքի ներկայացուցիչներին, մասնակցել են աշխատանքներին, որոնց ընթացքում

մայնքներում առկա մարտահրավերների ուղղությամբ համատեղ աշխատելու համար: Աշխատանքների ընթացքում ձեռք բերված հմտություններն ու գիտելիքներն օգնել են եւ նպաստել տեղային հարմարեցված ծառայությունների ուղղված բնաչության կարիքներին ավելի լավ արձագանքմանը եւ տեղական ծառայությունների որակի բարելավմանը:

Հարմարեցված ծառայությունների մշակման աշխատանքների առաջին արդյունքը մշակույթի պալատի բեմի վերանորոգումն է, կահավորումը, տեխնիկական վերազինումը, որը նոր շունչ ու բովանդակություն կհաղորդի Սեւան համայնքի մշակութային կյանքի աշխուժացմանն ու ակտիվացմանը:

**Արմինե Ղուկասյան**